



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

3 April 2020

Հարգելի ծնողներ և պահապաններ.

Մինչև երկուշաբթի, ապրիլի 6-ի հեռակա ուսուցման սկսվելը, մենք մի շարք մտահոգություններ ստացանք, որոնց մասին ցանկանում ենք հայտնել ձեզ, ինչպես նաև խորհուրդներ տալ և հիշեցումներ կատարել:

Հեռակա ուսուցումը դասավանդման մի մեթոդ է, որի ընթացքում աշակերտները և ուսուցիչները գտնվում են տարբեր վայրերում: Հեռակա ուսուցումը սահմանվում է Կալիֆոռնիայի Նահանգի կողմից, որը պետք է ներառնի տեսալին և ձայնային դասավանդում, որտեղ աշակերտի և ուսուցչի միջև ընկած հաղորդակցության գլխավոր մեթոդը համացանցային շփումն է, կրթական հեռուստատեսությունը, տեսաժապավենները, հեռուստատեսային դասընթացները կամ գիտաժողովները, կամ այլ համակարգչային դասավանդումը, վիրտուալ կամ հաղորդակցման տեխնոլոգիան: Այն կարող է պարունակել նաև տպագրված նյութեր, որոնք ներառնում են գրավոր կամ բանավոր առաջադրանքներ:

Հեռակա ուսուցման նպատակն է, թույլ տալ մանկավարժներին, դպրոցական շրջանի հետ մեկտեղ, հատկացնել շարունակական դասավանդում և բարձրորակ կրթական հնարավորություններ: Այն տարբեր կլինի յուրաքանչյուր դասարանի համար և կփոփոխվի քանի դեռ կիրառում ենք այս նոր մոդելը: Մենք պետք է աշխատենք իրար հետ, բայց խնդրում են, այս անցումային փուլում, լինել համբերատար:

Հեռակա ուսուցման ընթացքում պահանջվող տեխնոլոգիայի օգտագործումը կարող է հանգեցնել աշակերտների գրառումների ստեղծմանը, որը դուրս կլինի շրջանի, ինչպես նաև աշակերտի, վերահսկողությունից և կհանգեցնի ճանաչելի տեղեկությունների չնախատեսված բացահայտման: Շատ կարևոր է ձեզ վերանայել թվային գաղտնիության պայմանները յուրաքանչյուր հարթակ մտնելիս, քանի որ յուրաքանչյուրը կունենա իր ընտրանին:

Օրինակ, որոշ թվային հարթակներ հնարավորություն են տալիս փոխանակել որոշ անձնական տեղեկություն կամ պահանջում մուտք գործել ձեր սարքի տեսախցիկ/խոսափող: Ինչպես նաև զգույշ լինել ձեր երեխայի և ընտանիքի, նրա դասընկերների և նրանց ընտանիքների գաղտնիությունը պահելուց և տեղեկատվության սահմանափակումները նվազագույնի հասցնել: Մենք գիտակցում ենք, որ տեխնոլոգիական շատ հարթակներ պահպանում են ձեր անձնական տվյալները և ցանկանում են ձեզ նույնի վերաբերյալ ծանուցում հաղորդել: Մենք ակնկալում ենք, որ այդ ընկերությունները, ընդհանուր չափանիշներով, հետևողականորեն կգործեն պահել

աշակերտների տվյալների գաղտնիությունը կրթական ծառայություններ մատուցելիս: Մենք առավելագույն ջանքեր կգործադրենք, որպեսզի աշակերտի տվյալների հավաքումը և օգտագործումը սահմանափակվի միայն կրթական նպատակներով: Մենք կփորձենք կանխել այդ տվյալների չարտոնված թողարկումը կամ օգտագործումը առևտրական նպատակներով:

Նաև, ցանկանում եմ հիշեցնել բոլոր աշակերտներին և ծնողներին, որ հարգելով բոլորին, ոչ ոք չի կարող ձայնագրել դասավանդման կամ կրթական նստաշրջանի ընթացքում, առանց ուսուցչի կամ տնօրենի նախնական գրավոր համաձայնության: (Ըստ կրթական կոդեքսի մաս 51512-ի):

Մի քանի խորհուրդներ հեռակա ուսուցման վերաբերյալ

Հեշտ ուղեցույց հեռակա ուսուցման (տնային պայմաններում) համար.
https://drive.google.com/file/d/1sQ_QUmFwi-1j-bTZD3c2nXhEHR-HIH-n/view

Տարրկան դպրոցի աշակերտների օրվա ռեժիմի (դասացուցակի) օրինակ.
https://drive.google.com/file/d/1WIRGKZ2_Tsu1nWPDyryBEfs_q4IJOzlk/view

Միջանկյալ դպրոցի աշակերտների օրվա ռեժիմի (դասացուցակի) օրինակ.
https://drive.google.com/file/d/1PLFHjbQtwTEjmOzX5sPGcASCbt_1K2fu/view

Միջնակարգ դպրոցի աշակերտների օրվա ռեժիմի (դասացուցակի) օրինակ.
<https://drive.google.com/file/d/1FQ-VJn8lfE9lVJAddUXXze6M7FzNeGnT/view>

Ռեսուրսներ ծնողների համար (Դռները բաց դպրոց).
<https://wideopenschool.org/>

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Հիլլ
Գերատեսուչ